

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2014 ԹՎԱԿԱՆԻ ----- Ի ՆԻՍՏԻ N -----

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

<<ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ>>

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հավանություն տալ <<Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրին>>՝ համաձայն հավելվածի:

## ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1207-Ն որոշման և «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի(ՀՕ-246-Ն) հիմնադրույթներին համապատասխան: Ծրագրի անհրաժեշտությունը բխում է մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ կողմից ստանձնած և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորություններից, մասնավորապես՝ «Հազարամյակի նպատակների», «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթներից: Միաժամանակ Ծրագիրը համահունչ է հատուկ կարիքի կրթության վերաբերյալ Սալամանկայի հռչակագրի և Դակարի գործողությունների շրջանակներից բխող նպատակադրումներին:

2. Ծրագիրը նպատակաուղղված է «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Հանրակրթության մասին», «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով ամրագրված երեխայի կրթության հիմնարար իրավունքի իրացմանը, անկախ նրա ֆիզիկական, մտավոր, սոցիալական, զգայական և այլ պայմանականություններից: Ծրագրի կարևորությունը ամրագրվել է նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված՝ «Հայաստան–Պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի N2 հավելվածի 1.2 կետով:

3. Ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության որակը, կատարելագործելով

կրթության համակարգն ու նրանց համար ստեղծելով հավասար հնարավորություններ՝ իրենց նախասիրություններին, ընդունակություններին ու կարիքին համապատասխան որակյալ կրթություն ստանալու համար, դրանով իսկ նպաստելով կրթության մեջ նրանց ներգրավմանն ու համընդհանուր ներառմանը հասարակության մեջ:

## **II. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

4. Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը համահունչ է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված է այն բանին, որ կրթության ոլորտի բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղմման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

5. Կրթության ոլորտում գերակա է համարվում հանրակրթությունը, որը որպես գերակա ուղղություն ամրագրված է նաև «Կայուն զարգացման ծրագրում» (ԿԶԾ): Հանրակրթության ոլորտում ԿԶԾ-ը նպատակադրում է լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր մակարդակներում:

6. Այս մոտեցմամբ էլ պայմանավորված բազմաթիվ նոր մարտահրավերներ են ներկայացվում հանրակրթության համակարգին, որի մաս է կազմում նաև հատուկ կրթությունը: Վերջին տարիներին հանրակրթության, այդ թվում նաև հատուկ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են եղել կրթության մատչելիության ապահովմանն և որակի բարձրացմանը:

7. Հատուկ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում փոխվել է գիշերօթիկ դպրոցների կազմակերպահրավական ձևը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179-Ն որոշմամբ դրանք վերակազմակերպվել են «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» ՊՈԱԿ-ների, հաստատվել է օրինակելի կանոնադրությունը, որով էլ սահմանվել է դրանց գործունեության առարկան ու նպատակը, այն է. «կրթական բնույթի

գործունեության իրականացում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և հակասոցիալական վարք դրսևորած երեխաների կողմից հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովմամբ>>: Համաձայն այդ որոշման, գիշերօթիկ դպրոցները՝ վերակազմակերպվելով հատուկ դպրոցների, դադարեցին լինել խնամակալական կազմակերպություններ: Որպես այդ որոշման շարունակություն, 2005 թվականին ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որն այս ոլորտի համար բեկումնային էր: Մասնավորապես, օրենքը սահմանեց «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ» հասկացությունը, ինչպես նաև հստակություն մտցրեց երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ճանաչման և հատուկ դպրոցի ընդունելության համակարգում, միաժամանակ ամրագրեց նաև «ներառական կրթություն» հասկացությունը: Օրենքը նաև սահմանեց հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում պետական աջակցությունից օգտվելու իրավունք ունեցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների 7 խմբերը, այն է՝

- 1) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող,
- 2) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող,
- 3) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն ունեցող,
- 4) մտավոր հետամնացություն ունեցող,
- 5) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող,
- 6) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող,
- 7) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաներ:

8. Երեխաների ընդունելությունը հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, 2003-2007 թվականներն ընկած ժամանակահատվածում, կատարվում էր ըստ ենթակայության՝ հանրապետական կամ մարզային բժշկահոգեբանա մանկավարժական հանձնաժողովների ուղեգրերով: Սակայն հանձնաժողովների գործունեությունը կրում էր ֆորմալ բնույթ, քանի որ վերջիններս հասարակական կարգով

գործող մարմիններ էին: Եվ երեխաների ընդունելությունը հաստատություններ դպրոցների տնօրենների կողմից կատարվում էր հիմնականում բժշկական ախտորոշումների հիման վրա, մինչդեռ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2003 թվականի օգոստոսի 13-ի N593-Ն/Ք հրամանով արդեն իսկ հաստատվել էին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական գնահատման չափանիշները: Այս չափանիշները մշակվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից սահմանված հիվանդությունների 10-րդ դասակարգման հիման վրա:

9. Այսպիսով, փաստացիորեն մարզային բժշկահոգեբանամանկավարժական հանձնաժողովների կողմից երեխայի կարիքների գնահատում չէր կատարվում: Եվ քանի որ երկրում սոցիալական վիճակը շարունակում էր լարված մնալ, դպրոցները համալրվում էին հիմնականում աղքատ ընտանիքների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կամ չունեցող (այդ թվում՝ որբ, ծնողական խնամքից զրկված) երեխաներով: Իրավիճակը շտկվեց և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը կտրուկ նվազեց <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջով՝ 2007 թվականին ստեղծված <<Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի>> (ԲՀՄԳԿ) գործունեության շնորհիվ: Երևանի բժշկահոգեբանա մանկավարժական գնահատման կենտրոնի և իր 2 մասնաճյուղերի գործունեության արդյունքում բարելավվեց երեխաների վկայագրման գործընթացը: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիրը տրվում է ՀՀ տարածքային կառավարման պետական մարմնի (Երևանում՝ Երևանի քաղաքապետի) կողմից՝ Երևանի բժշկահոգեբանա մանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացության հիման վրա: Ունենալով վկայագիր, երեխան կարող է մուտք գործել հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն և իր ուսումնառությունը շարունակել հատուկ դպրոցում: Իսկ սովորողի ընդունելությունը հակասոցիալական վարք դրսևորած երեխաների համար նախատեսված հատուկ դպրոց, կատարվում է <<Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում>> հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:

10. Միաժամանակ, օրենքի կիրարկման արդյունքում <<որբ և ծնողական խնամքից զրկված երեխաները>> այլևս չդիտարկվեցին որպես հատուկ կրթության կարիք ունեցող

երեխաներ և ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N1646-Ն որոշմամբ որք և ծնողական խնամքից զրկված երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները վերակազմակերպվեցին, փոխելով իրենց գործունեության բնագավառը: Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, հատուկ կրթության համակարգում գործող 52 հատուկ դպրոցների փոխարեն (որտեղ սովորում էր շուրջ 10000 երեխա) ներկայումս գործում է 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, որտեղ 2013-2014 ուսումնական տարում սովորել է շուրջ 2300 երեխա, և որոնցից գիշերել է մոտ 30%-ը:

11. Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններն այսօր պայմանականորեն կարող ենք դասակարգել 2 խմբի՝

- 1) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ դպրոցներ,
- 2) հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հատուկ դպրոցներ:

12. Միաժամանակ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179-Ն որոշման համաձայն, ՀՀ-ում գործում են հետևյալ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը՝

- 1) <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ ( գործում է 1 դպրոց),
- 2) <<Տեսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ ( գործում է 3 դպրոց),
- 3) <<Խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ (գործում է 2 դպրոց),
- 4) <<Ընաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ ( գործում է 1 դպրոց),
- 5) <<Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ ( գործում է 15 դպրոց),
- 6) <<Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ, (գործում է 1 դպրոց՝ Հանրապետական N1 հատուկ կրթահամալիր):

13. ՀՀ-ում գործող 23 հատուկ հանրակրթական հաստատություններից 10-ը՝ ՀՀ ԿԳ նախարարության, 13-ը՝ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների

ենթակայության են: Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության համաձայն, այս հաստատությունները կարող են աշխատել թե գիշերօթիկ, թե երկարօրյա ռեժիմով: ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ է գործում նաև Երևանի բժշկահոգեբանա մանկավարժական կենտրոնն իր 2՝ Ստեփանավանի և Կապանի մասնաճյուղերով:

**14. Ներառական կրթության համակարգը:** Հատուկ հանրակրթական դպրոցներին զուգահեռ հանրապետությունում գործում է նաև ներառական կրթության համակարգը: Համաձայն «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի, ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:

15. «Ներառական կրթություն» ասելով այսօր հասկանում ենք՝ յուրաքանչյուր (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխայի համար, իր զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն ու հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

16. Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Մեթոդի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կրթական կարիքների գնահատումն է և կրթության պրոցեսին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը: Մեթոդի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում բազմամասնագիտական թիմի ստեղծումը, որն իր մեջ ներառում է երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետների (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ): Յուրաքանչյուր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար մշակվում է անհատական ուսուցման պլան:

17. Ներառական կրթությունը ՀՀ-ում մեկնարկել է դեռևս 2001 թվականին, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ: Ներառական կրթության կայացմանն իր մեծ նպաստն է բերել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը: Այսօր արդեն ՀՀ-ում ներառական կրթություն

իրականացնելու իրավունք է վերապահվել 139 դպրոցների, իսկ դրանցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը կազմել է շուրջ 3000 երեխա: Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման, հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ֆինանսավորվում է բարձրացված չափաքանակով: Միաժամանակ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N439-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար: Համաձայն նոր չափորոշիչի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին:

18. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակով, ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N46-Ն որոշմամբ Տավուշի մարզում իրականացվում է փորձնական ծրագիր, ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը, ըստ որի՝ մարզի բոլոր 77 հանրակրթական դպրոցների տրվել են ուսուցչի օգնական հաստիքներ: Այսօր Տավուշի մարզի բոլոր հանրակրթական դպրոցները իրականացնում են ներառական կրթություն և ունեն մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետներ: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի իրականացրած վերլուծության տվյալների, հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկվածության ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է Տավուշի մարզում:

19. ՀՀ Ազգային ժողովը 2012 թվականի հոկտեմբեր ամսին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կրթական գործընթացի մասնակիցներին տրամադրելով կրթության կազմակերպման աջակցության ծառայություններ 3 մակարդակներում:

20. Ինչպես նաև հատուկ կրթության ոլորտում պետական միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով նախատեսվում է բոլոր հատուկ

հանրակրթական ուսումնական հաստատությունների լիազոր մարմին ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Այսպիսի մոտեցում է պահանջվում նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 2011 թվականին ստորագրված «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի N2 հավելվածի 1.2 կետով:

**21. Միջազգային փաստաթղթերը և հատուկ կրթության ոլորտի մոդելները Եվրոպական երկրներում:** Ինչպես եվրոպական երկրներում, այնպես էլ մեզ մոտ, այսօր վերանայվում և վերաիմաստավորվում են հատուկ կրթության ոլորտի նպատակները, արժեքները և մեթոդները: Որո՞նք են այն մեխանիզմները, որոնք երաշխավորում են, որ բոլոր երեխաները անկախ ռասսայից, մշակույթից, սոցալիական այս կամ այն խմբի պատկանելիությունից, կարիքից կամ սեռից կրթության համակարգում ապահովված լինեն հնարավորությունների հավասարությամբ: Արդյո՞ք հաշմանդամության պիտակավորումով մենք որևէ ձևով օգնում ենք երեխային: Իրատեսակա՞ն է արդյոք ակնկալել այս ոլորտում մասնագետների տարբեր խմբերի համագործակցությունը: Ո՞րն է այսօրվա ժամանակակից հասարակության մեջ նրանց տեղը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

22. Խոսելով եվրոպական հասարակության մեջ հատուկ կրթության մասին պետք է ասել, որ այն անցումային փուլում է՝ երկկողմանի, դասակարգված բժշկական մոդելից դեպի լիարժեք, ներառական միակողմանի հանրակրթության ծրագրի և կառուցողական մի մոդելի, որն ի վիճակի է երեխաների կրթությունը կազմակերպել սովորական դասարանում: Բայց դեռևս հարց է մնում, թե արդյոք ավանդական դպրոցը կարո՞ղ է լինել արդյունավետ, կարո՞ղ է այն ապահովել տարբեր երեխաների տարբեր կարիքները: Կամ, արդյո՞ք պետք է փոխվի ավանդական դպրոցի մոդելը: Այս հարցը մանրամասն քննարկվել է Սալամանկայի հոչակագրում և Դակարի հատուկ կարիքի կրթության գործողությունների պլանում, նշելով, որ «Դպրոցները պետք է հարմարացվեն բոլոր երեխաներին՝ անկախ նրանց ֆիզիկական, մտավոր սոցիալական, զգայական, լեզվական և այլ պայմանականություններից»: Այս մոտեցմամբ պայմանավորված բազմաթիվ նոր մարտահրավերներ են ներկայացվում հանրակրթության համակարգին: Սալամանկայի այս փաստաթղթի համատեքստում՝ *«հատուկ կրթական կարիք» տերմինը վերաբերվում է բոլոր այն երեխաներին և պատանիներին, ում կարիքները բխում են հաշմանդամությունից կամ սովորելու*

*դժվարություններից:* Միաժամանակ այս փաստաթղթերում ամրագրված է, որ <<դպրոցները պետք է գտնեն բոլոր երեխաներին հաջողությամբ կրթություն տալու ձևերը>>:

23. Եվրամիության անդամ և անդամության ենթակա տարբեր երկրների ներկայիս մոտեցումն ուղղված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրմանը հանրակրթական դպրոցներ՝ ցուցաբերելով տարբեր աստիճանի աջակցություն ուսուցիչներին՝ տրամադրելով լրացուցիչ անձնակազմ, նյութեր և սարքավորումներ: Ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական դպրոցներ ներառելու քաղաքականության երկրները բաժանվում են 3 կատեգորիայի: Առաջին կատեգորիայի (անվանենք՝ միասնական կատեգորիա) երկրների թվին են պատկանում Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան, Շվեդիան, Նորվեգիան և Կիպրոսը: Ընդհանուր առմամբ ինտեգրման իրականացման այս ձևը խթանվում է տարբեր ծառայություններ կենտրոնացնելով հանրակրթական դպրոցներում: Երկրներում, որոնք պատկանում են երկրորդ կատեգորիային (անվանենք՝ երկկողմանի կատեգորիա), գոյություն ունեն երկու առանձին կրթական համակարգեր: Այս 2 համակարգերը կարգավորվում են (կամ մինչև բոլորովին վերջերս կարգավորվում էին) առանձին օրենսդրությամբ, երկու առանձին օրենքներով՝ հանրակրթության մասին և հատուկ կրթության մասին օրենքներով: Բելգիայում, Հոլանդիայում, Բուլղարիայում, Լատվիայում հատուկ կրթության համակարգը բավականին լավ զարգացած է և գործում է հանրակրթությունից առանձին: Այս երկրների աշակերտների ընդհանուր թվի 3%-ը գտնվում են հատուկ դպրոցներում: Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տոկոսը շատ ցածր է:

24. Երրորդ կատեգորիային (անվանենք՝ բազմակողմանի կատեգորիա) պատկանող երկրները ունեն ինտեգրման բազմակողմանի մոտեցումներ: Նրանք չեն առաջարկում միայն մեկ լուծում (ինտեգրում, կամ հանրակրթություն՝ տարբեր ծառայությունների աջակցությամբ), կամ ընտրություն միայն երկու տարբերակների միջև (հանրակրթություն կամ հատուկ կրթություն), այլ առաջարկում են զանազան ծառայությունների մեծ շրջանակ այս երկու համակարգերի միջև: Այս երկրները հաճախ ունենում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զգալի մեծ թիվ, որոնց 1-

5%-ը առանձնացված են հատուկ դպրոցներում: Այս երկրների թվին են պատկանում Դանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իռլանդիան, Ավստրիան, Ֆինլանդիան, Չեխիան, Էստոնիան, Հունգարիան, Լեհաստանը, Սլովենիան, Սլովակիան, Լիտվան:

### III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

25. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրի նպատակադրումները սահմանված են կրթության որակի և մատչելիության ապահովման տեսանկյունից, և բխում են «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքից (ՀՕ-246-Ն): Դրանք են՝

- 1) հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնում, անցում կատարելով համընդհանուր ներառական կրթության համակարգին,
- 2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման, գնահատման և դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրում,
- 3) հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացում:

26. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում առկա խնդիրներն են՝

- 1) առկա չէ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազան,
- 2) թերի է կրթությունից դուրս մնացած երեխաների (այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող) հաշվառման համակարգը, ինչպես նաև ամբողջական չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները,
- 3) առկա չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վաղ հայտնաբերման, հաշվառման և նրանց կարիքին համապատասխան համակարգված աշխատանքներ տանելու մեխանիզմներ,
- 4) հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում դեռևս սովորում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ,

- 5) բարելավման կարիք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրման չափորոշիչները, գործիքակազմը և մեխանիզմները,
- 6) հատուկ կրթության ծառայությունները կենտրոնացված են առանձին տարածքներում, սակայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ կան ՀՀ ողջ տարածքում, և նրանց համար չի ապահովվում իրենց կարիքին համապատասխան կրթության հասանելիությունն ու մատչելիությունը,
- 7) հանրակրթական դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ինչը խոչընդոտում է ներառական կրթության արդյունավետ իրականացմանը,
- 8) անհրաժեշտ է բարելավել դպրոցների շենքային պայմաններն ու հարստացնել նյութատեխնիկական բազան՝ մոտեցնելով այն միջազգային չափանիշներին: ՀՀ-ում գործող հանրակրթական (այդ թվում նաև հատուկ) դպրոցների զգալի մասը կառուցվել են մինչև 1970-ականները և չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, չունեն բնականոն ուսումնակենցաղային պայմաններ: Որոշ դպրոցներում բացակայում են կամ չեն գործում ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերը,
- 9) անհրաժեշտ է ընդլայնել հանրակրթական և հատուկ դպրոցների համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների/կառույցների հետ:

27. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն համապատասխան միջոցառումների աստիճանական և համալիր իրականացման դեպքում: Այդ բարեփոխումների հիմնական ուղղություններն են՝

- 1) կառուցվածքային բարեփոխումները,
- 2) ընդունելության համակարգի կատարելագործումը,
- 3) իրականացվող ծառայությունների ապակենտրոնացումը,
- 4) կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը,
- 5) երեխաների կրթության և աջակցող ծառայությունների որակի բարելավումը,
- 6) դպրոցներում շենքային պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական բազայի համալրումը:

#### IV. ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԿԱՆԸ

28. Հատուկ կրթության համակարգային բարեփոխումներն ուղղված են մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ կողմից ստանձնած և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորությունների, մասնավորապես՝ «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթների իրականացմանը: Ծրագիրը համահունչ է հատուկ կարիքի կրթության վերաբերյալ Սալամանկայի հռչակագրի և Դակարի գործողությունների շրջանակների նպատակադրումներին: Ծրագիրը բխում է «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի(ՀՕ-246-Ն) և ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2012 թվականի հոկտեմբեր ամսին առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով ամրագրված դրույթներից:

29. Կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կրթական գործընթացի մասնակիցներին կտրամադրվեն կրթության կազմակերպման աջակցության ծառայություններ երեք մակարդակում, և այդ նպատակով կձևավորվեն տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ:

30. Աստիճանական անցում կկատարվի համընդհանուր ներառական կրթության համակարգի: Կընդլայնվի ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցը՝ յուրաքանչյուր տարի ցանկում ավելացնելով առնվազն 15 դպրոց: Այդ գործընթացին զուգահեռ կպահպանվի հատուկ հանրակրթական դպրոցների համակարգը: Հատուկ կրթության ճյուղերին համապատասխան մեկական հատուկ դպրոց կընդլայնի իր գործունեության շրջանակները՝ գործելով որպես համապատասխան ճյուղի ռեսուրսային և գիտագործնական կենտրոն (հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն):

31. Կրթության կազմակերպման աջակցության ծառայություններ կտրամադրվեն՝

- 1) դպրոցական մակարդակում՝ երեխայի ուսումնառության ուսումնական հաստատության կողմից,

- 2) տարածքային մակարդակում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից,
- 3) հանրապետական մակարդակում՝ հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից:

32. Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները՝

- 1) կիրականացնեն երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում,
- 2) կկազմեն համապատասխան եզրակացություն՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ,
- 3) կմատուցեն կրթության կազմակերպման աջակցության ծառայություններ,
- 4) կիրականացնեն խորհրդատվական փոխայցեր ուսումնական հաստատություններ,
- 5) կկազմակերպեն և կանցկացնեն վերապատրաստումներ,
- 6) մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կարող է կազմակերպել հատուկ կրթական ծրագիր՝ չափավոր, ծանր և խորը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար:

33. Իր կանոնադրական գործառույթները իրականացնելու համար մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը պետք է ունենա՝

- 1) որոշակի մասնագիտական կազմ (մանկավարժներ՝ այդ թվում՝ սոցիալական և հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ, բժշկական անձնակազմ, հոգեբաններ, իրավաբաններ, խնամք իրականացնող անձնակազմ և այլն),
- 2) իր կանոնադրական պահանջներին համապատասխան գործառույթները իրականացնելու պայմաններ (առանձնացված գույք, շենք, շինություն, միջոցներ և այլն),
- 3) հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական մատչելիության պայմաններ (թեքահարթակներ կամ վերելակ, հաշմանդամ անձանց համար հարմարեցված զուգարաններ, ստանդարտներին համապատասխանող դռներ),
- 4) տեսողության, լսողության, խոսքի ծանր, վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ, մտավոր հետամնացություն, հենաշարժական համակարգի խախտումներ, հոգեբանական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների

կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար անհրաժեշտ միջոցներ (գործիքներ),

- 5) գնահատման գործընթացի ընթացքում կրթության կազմակերպման անհրաժեշտ պայմաններ (ուսումնանյութական բազա և մանկավարժներ), առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության շարունակականությունը ապահովելու նպատակով,
- 6) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հատուկ մանկավարժական, վերականգնողական, հոգեբանական բնույթի գործունեություն իրականացնելու պայմաններ,
- 7) մեթոդական աշխատանքներ իրականացնելու հնարավորություններ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար,
- 8) հատուկ կրթության հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանսներ, սեմինարներ, ցուցահանդեսներ՝ անցկացնելու պայմաններ,
- 9) ննջարանային և սննդի կազմակերպման մասնաշենք, երկարատև դիտարկում և գնահատում պահանջող երեխաների համար,
- 10) միկրոավտոբուսներ:

34. Տարածքային մակարդակում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները՝

- 1) կիրականացնեն երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում, համաձայն կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական չափորոշիչների,
- 2) կսահմանեն երեխայի կրթական առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման հիմքերը,
- 3) կկազմեն համապատասխան եզրակացություն և առաջարկություններ՝ երեխայի կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների վերաբերյալ,
- 4) կտրամադրեն անհրաժեշտ խորհրդատվություն երեխայի ծնողին և դպրոցի մանկավարժահոգեբանական աշխատողներին՝ երեխայի կրթության կազմակերպման վերաբերյալ,
- 5) կմատուցեն կրթության կազմակերպմանն աջակցող ծառայություններ,

- 6) կիրականացնեն խորհրդատվական փոխայցեր ուսումնական հաստատություններ,
- 7) կհամակարգեն իրենց ամրագրված տարածքի դպրոցական մակարդակի կրթության կազմակերպման աջակցության ծառայությունների աշխատանքը,
- 8) կապահովեն հատուկ դպրոց–ռեսուրս կենտրոն և հանրակրթական ուսումնական հաստատություն կապը,
- 9) կկազմակերպեն և կանցկացնեն վերապատրաստումներ ուսումնական հաստատությունների կրթության կազմակերպմանն աջակցող մասնագետների և ծնողների համար:

35. Հանրապետական մակարդակում՝ հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը՝

- 1) կապահովի կրթության կազմակերպման աջակցության և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման միասնական մոտեցումը,
- 2) կսահմանի կրթության կազմակերպմանն աջակցող ծառայությունների շրջանակը,
- 3) կսահմանի երեխաների զարգացման առանձնահատկությունների բացահայտման, գնահատման և կրթության համար անհրաժեշտ պայմանների ապահովման հիմքերը,
- 4) կմշակի կրթության կազմակերպմանն աջակցող ծառայությունների ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,
- 5) կիրականացնի կրթության կազմակերպմանն աջակցող մասնագետների վերապատրաստման դասընթացներ,
- 6) կհամակարգի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքը,
- 7) կհամակարգի հանրակրթական ուսումնական հաստատություն, հատուկ դպրոց–ռեսուրս կենտրոն, տարածքային հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոն փոխադարձ կապերը,
- 8) կիրականացնի մշտադիտարկում և վերլուծություն՝ երեխայի կրթության կազմակերպման աջակցության դպրոցական և տարածքային մակարդակներում,
- 9) կմշակի և կիրատարակի մեթոդական նյութեր և ուղեցույցներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող

մանկավարժահոգեբանական մասնագետների և ծնողների համար, կմատուցի նաև խորհրդատվություն,

10) կհամակարգի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազան, կիրականացնի տվյալների վերլուծություն՝ ըստ պատճառահետևանքային կապերի և կներկայացնի առաջարկություններ հանրակրթության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ,

11) կիրականացնի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների բողոքարկում:

36. Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից տրված երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը կվկայագրի երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

37. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիր ունեցող երեխայի կրթության կազմակերպման համար կպահպանվի ֆինանսավորման բարձրացված չափաքանակի հատկացումը:

38. Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունը և դրանց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

39. Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների համար պետական լիազոր մարմինը կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է:

## **V. ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ**

### **ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

40. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ռազմավարությունը համահունչ է «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենքով ամրագրված դրույթներին, համաձայն որի՝ այդ գործընթացը կիրականացվի ներառական կրթության ընդլայնման, հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացման,

յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրման միջոցով: Ընդ որում հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացումը կիրականացվի 3 ուղղությամբ՝

- 1) կվերանայվեն հատուկ դպրոցների տիպերը, դրանց ենթակայության և տարածքային բաշխվածության չափանիշները,
- 2) ներառական դպրոցների ցանցի ընդլայնմանը զուգընթաց (տարեկան առնվազն 15 դպրոցով)՝ կկրճատվեն հատուկ դպրոցների թիվը, և դրանց մի մասը կփոխակերպվի ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներին աջակցող մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների,
- 3) կապահովվի հատուկ կրթության ճյուղերին համապատասխան մեկական հատուկ դպրոցի՝ որպես համապատասխան ճյուղի ռեսուրսային և գիտագործնական կենտրոնի գործունեությունը:

41. Արդյունքում կհստակեցվեն կրթական հաստատությունների տեսակներն ու տարածքային բաշխվածության սկզբունքները՝ ապահովելով դրանց առավել արդյունավետ համապատասխանությունը մարզային սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին և հասարակության կրթական պահանջմունքներին: Կձևավորվեն և կզարգացվեն կրթական հաստատություններ, որոնք իրենց պայմաններով և կրթական ծառայությունների որակով համադրելի կլինեն օտարերկրյա նմանատիպ հաստատություններին: Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն:

42. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ռազմավարությունը կհիմնվի հետևյալ սկզբունքների վրա, մասնավորապես՝

- 1) ՀՀ յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, Երևան քաղաքում՝ առնվազն երեք, կվերակազմակերպվեն մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնի՝ պահպանելով հանրակրթական հատուկ ծրագրի իրականացման իրավունքը: Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական

հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կարող է ձևավորվել այնպիսի կազմակերպության հիման վրա, որում առկա կլինեն ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ,

- 2) ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179 որոշմամբ հաստատվել են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը, որոնք նախատեսված են որոշակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար (օրինակ՝ լսողական, տեսողական, խոսքի, մտավոր, հենաշարժողական, վարքային և այլն): Այս դասակարգումից էլ ելնելով, հանրապետությունում կան դպրոցներ, որոնք իրենց տիպով միակն են և այստեղ սովորում են նույն խնդիրն ունեցող երեխաները՝ հանրապետության տարբեր մարզերից: Այս հաստատությունները կարող են փոխակերպվել ուսումնամեթոդական ռեսուրս կենտրոնի, քանի որ այս դպրոցներում կուտակված է տվյալ ոլորտի ամբողջ մանկավարժական և մեթոդական պոտենցիալը, և որը մշակում է ուսումնական ծրագրեր ոչ միայն հատուկ հանրակրթական դպրոցում կիրառելու, այլև ընդհանրապես՝ նաև ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցում սովորող համապատասխան տիպի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը կազմակերպելու նպատակով:

43. Հաստատությունների փոխակերպման գործընթացը կիրականացվի աստիճանաբար, առանձին փորձնական ծրագրերի միջոցով՝ տարբեր այլընտրանքային մոդելների կիրառմամբ: Առանձին փորձնական ծրագրերի իրականացմանը կաջակցեն ՀՀ-ում գործող մի շարք հասարակական ու միջազգային կազմակերպություններ: Ռազմավարության իրականացման միջոցառումների պլանը ներկայացված է *աղյուսակ 1-ում*:

## **VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

44. Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների փոխակերպման գործընթացը կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

- 1) Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում Հանրապետական N1 հատուկ կրթահամալիրը, որը հանդիսանում է հակասոցիալական վարք դրսևորած երեխաների կրթության

կազմակերպման միակ հաստատությունը, կփոխակերպվի ուսումնամեթոդական ռեսուրս կենտրոնի, որը կդառնա աջակցող օղակ համայնքային սոցիալական ծառայությունների և հանրակրթական դպրոցների մասնագետների, վարքային խնդիրներ ունեցող երեխաների ծնողների(օրինական ներկայացուցիչների), երեխայի իրավունքների պաշտպանության բաժինների և հոգաբարձության, խնամակալության հարցերով հանձնաժողովների մասնագետների համար: Կվերանայվեն կրթահամալիրի գործառույթները, կմշակվի վերափոխման ռազմավարություն և ծրագրի իրականացման ընթացքում կմշակվի ու կներդրվի կանխարգելման և ուղղորդման քաղաքականություն՝ հանրակրթական դպրոցների, երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, սոցիալական ծառայությունների և մեթոդական ռեսուրս կենտրոնի մասնակցությամբ: Ծրագիրը կնպաստի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի, ինչպես նաև աշակերտ-համայնք և համայնք-ընտանիք հարաբերությունների ամրապնդմանը, հակասոցիալական վարք ցուցաբերած երեխաների թվի կրճատմանը և վարքային խնդիրներ ունեցող երեխաների ներառմանը հասարակություն,

- 2) ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության համակարգի ձևավորումը, որպես ներառական կրթական համակարգի բաղկացուցիչ մաս» ծրագրի շրջանակներում Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N17 հատուկ դպրոցը կվերակազմակերպվի «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի»: Ծրագրի նպատակն է աջակցել համընդհանուր ներառական կրթության քաղաքականության անցմանը: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն Երևանի բժշկահոգեբանական գնահատման կենտրոնի, մեկ հատուկ հանրակրթական դպրոցի, (որպես փորձական «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի») և ծրագրում ընդգրկված ներառական կրթություն իրականացնող 2 հանրակրթական դպրոցների և 2 մանկապարտեզի կարողությունները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հարցերում:

Փորձագիտական խմբերի կողմից կմշակվեն <<Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի>> վերակազմակերպման փորձնական ընթացակարգերը, ֆինանսավորման փորձնական կարգը, օրինակելի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը: Միաժամանակ, կմշակվեն նաև <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման>> նոր չափորոշիչները և գործիքները՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի նիստի N1 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ <<Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգի>> պահանջներին համապատասխան: Ինչպես նաև կմշակվեն վերը նշված չափորոշիչների և գործիքների կիրառման ուղեցույցները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ նախադպրոցական հաստատություններից և հատուկ դպրոցներից հանրակրթական դպրոց տեղափոխման փորձնական կարգերը: Կիրականացվի ծրագրում ընդգրկված ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի նիստի N1 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ <<Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին>> համապատասխան: Աջակցություն կցուցաբերվի հատուկ դպրոցում սովորող երեխաների տեղափոխմանը՝ իրենց բնակության վայրին մոտ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներ: Երևանի բժշկահոգեբանական գնահատման կենտրոնի կողմից կմշակվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բազաները՝ հիմնված ԱՀԿ ՖՄԴ-ի վրա:

## VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

45. Հատուկ կրթության ոլորտի համակարգային բարեփոխումները կիրականացվեն ՀՀ պետական բյուջեով նախատեսվող միջոցների շրջանակներում, ինչպես նաև ՀՀ-ում

գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ: Միաժամանակ պետական և արտաբյուջետային միջոցների հաշվին կիրականացվեն փորձնական ծրագրեր, վերապատրաստումներ, հետազոտություններ ու տեղեկատվական արշավներ:

46. Ծրագրով նախատեսվող հատուկ կրթության համակարգի նոր մոտեցումների արդյունքում ֆինանսական ծավալների փոփոխությունը կկատարվի բյուջետային գործընթացով նախատեսված՝ Միջնաժամկետ ծախսային ծրագրի կողմնորոշիչ չափաքանակների և տարեկան բյուջեով նախատեսվող միջոցների շրջանակներում: Միաժամանակ 2014-2022 թվականների ընթացքում կշարունակվի հատուկ կրթության համակարգի բարեփոխման միջազգային օժանդակության ծրագիրը:

### **VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

47. Ծրագրի իրականացման պատասխանատուն և համակարգողը կլինի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

48. Ծրագիրը կիրականացվի առանձին նպատակային և փորձնական ծրագրերի միջոցով, որոնք կարտացոլվեն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում և ՀՀ պետական բյուջեում: Ենթածրագրերի մշակումը և իրականացումը կկատարվի պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նպատակային և փորձնական ծրագրերի ցանկում կընդգրկվեն նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք համահունչ են Ծրագրի նպատակներին և ուղղված են դրա խնդիրների իրականացմանը:

49. Ծրագրի իրականացման ընդհանուր մոնիթորինգը և գնահատումը կիրականացվի տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության/տվյալների հիման վրա: Տվյալների հիմնական աղբյուր կձառայեն ԱՎԾ պաշտոնական հրապարակումները, Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, առանձին կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի և հետազոտությունների արդյունքները: Ըստ անհրաժեշտության, կիրականացվեն նաև համապատասխան հետազոտություններ՝ ներգրավելով միջազգային և հասարակական կազմակերպություններ:

50. Ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ կիրապարակվեն տարեկան հաշվետվություններ:

**Աղյուսակ 1. Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ռազմավարության իրականացման միջոցառումների պլան:**

Հ/Հ	Միջոցառումը	Ժամկետը	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուրը
1	<<Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության համակարգի ձևավորումը, որպես ներառական կրթական համակարգի բաղկացուցիչ մաս>> ծրագրի իրականացում	01.09.2014	<< կրթության և գիտության նախարարություն <<Հուլիսի կամուրջ>> ՀԿ (համաձայնությամբ)	<< պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ
2.	Ծրագրի վերաբերյալ իրազեկության բարձրացում(տեղեկատվական արշավների անցկացում և ծրագրի իրականացման արդյունքների լուսաբանում ): Հասարակության շրջանում ոչ խտրական վերաբերմունք և դպրոցներում սոցիալական միջավայր ձևավորելու նպատակով համապատասխան միջոցառումների կազմակերպում	2014-2015թթ.	<< կրթության և գիտության նախարարություն Երևանի բժշկահոգեբանաման կավարժական գնահատման կենտրոն, <<Հուլիսի կամուրջ>> ՀԿ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	<< պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ
3.	Սյունիքի մարզի Գորիսի N1 հատուկ և Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցների վերակազմակերպման փորձնական ծրագրի մշակում և իրականացում	2014-2015թթ.	<< կրթության և գիտության նախարարություն, << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, << տարածքային կառավարման նախարարություն, ՄԱԿ-ի մանկական	<< պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ

			հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	
4.	Հանրապետական N1 հատուկ կրթահամալիրի գործունեության ընդլայնման (որպես հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի) ծրագրի մշակում և իրականացում	2014-2016թթ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Ֆրանս-հայկական հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ
5.	Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործիքակազմի մշակում, հիմնված ԱՄԿ ՖՄԴ-ի վրա	2014-2016թթ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի բժշկահոգեբանաման կավարժական գնահատման կենտրոն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, <<Հույսի կամուրջ>> ՀԿ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ
6.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական գնահատման չափորոշիչների մշակում և հաստատում	30.06.2017	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի բժշկահոգեբանաման կավարժական գնահատման կենտրոն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, <<Հույսի կամուրջ>> ՀԿ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Դոնոր միջոցներ
7.	Փորձնական ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում	Փորձնական ծրագրերի իրականացման	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		ավարտից հետո	սոցիալական հարցերի նախարարություն, << տարածքային կառավարման նախարարություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ <<Հուլիսի կամուրջ>> ՀԿ (համաձայնությամբ)	Դոնոր միջոցներ
--	--	--------------	--	----------------

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

#### **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության՝ 18.06.2014 թիվ 01/14.10/[200126]-14 գրությամբ ստացված, մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի ս/թ հունիսի 12-ի նիստի արձանագրության 10-րդ կետի 2-րդ ենթակետի հանձնարարականի համաձայն: Ներկայացվող փաստաթղթի հիմքում ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N70-Ն որոշման N1 հավելվածի 63-րդ կետի հանձնարարականի համաձայն մշակված՝ «Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բարեփոխման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի լրամշակված փաթեթն է:

Ներկայացվող նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1207-Ն որոշման և «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր» ՀՀ օրենքի (ՀՕ-246-Ն) հիմնադրույթներին համապատասխան: Իրավական ակտի ընդունումը բխում է մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ կողմից ստանձնած և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորություններից, մասնավորապես՝ «Հազարամյակի նպատակների», «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների դրույթներից: Միաժամանակ այս որոշման նախագիծը համահունչ է հատուկ կարիքի կրթության վերաբերյալ Սալամանկայի հռչակագրի և Դակարի գործողությունների շրջանակներից բխող նպատակադրումներին: Նախագիծը նպատակաուղղված է «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Հանրակրթության մասին», «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով ամրագրված երեխայի կրթության հիմնարար

իրավունքի իրացմանը, անկախ նրա ֆիզիկական, մտավոր, սոցիալական, զգայական և այլ պայմանականություններից: Որոշման նախագծի կարևորությունը ամրագրվել է նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված՝ «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի N2 հավելածի 1.2 կետով:

Իրավական ակտի կիրարկման արդյունքում նախատեսվում է ներառական կրթության ընդլայնում, հատուկ դպրոցների օպտիմալացում, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրում:

## **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Վերջին տարիներին հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են եղել կրթության որակի բարելավմանն ու մատչելիության բարձրացմանը: Հատուկ կրթության ոլորտում այդ բարեփոխումների ուղղություններն են եղել՝

- հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և կրթության մեջ նրանց ներգրավման արդյունավետ համակարգի ձևավորում,
- հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացում:

Բարեփոխումների արդյունքում փոխվել է նախկինում գործող գիշերօթիկ դպրոցների կազմակերպարավական ձևը՝ «Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179-Ն որոշմամբ դրանք վերակազմակերպվել են «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» ՊՈԱԿ-ների: Բարելավվել է երեխաների վկայագրման գործընթացը, հիմնադրվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնն իր 2 մասնաճյուղերով: Ներդրվել է ներառական կրթությունը հանրակրթական դպրոցներում և ներկայումս ներառական կրթություն իրականացվում է հանրապետության 139 հանրակրթական դպրոցներում: Միաժամանակ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունվարի 27-ի N46-Ն որոշմամբ Տավուշի մարզում

իրականացվում է փորձնական ծրագիր, ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը: Ընդունվել են հատուկ կրթության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են կատարվել <<Կրթության մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>> և <<<< հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներում, ընդունվել է <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքը, 2007 թվականին Հայաստանը ստորագրել է ՄԱԿ-ի հաշմանդամ անձանց իրավունքների մասին կոնվենցիան: Օրենսդրորեն հստակեցվել են հատուկ կրթության ոլորտում կիրառվող մի շարք հասկացություններ, մասնավորապես՝ <<կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ>>, <<ներառական կրթություն>> և <<հատուկ կրթություն>> հասկացությունները: Օրենքով սահմանվել են նաև հատուկ դպրոցներում և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում պետական աջակցությունից օգտվելու իրավունք ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաների 6 խմբերը: Այս օրենսդրական փոփոխությունների արդյունքում նաև կրճատվել է հատուկ դպրոցների թիվը: Հատուկ կրթության համակարգում գործող 52 հատուկ դպրոցների փոխարեն (որտեղ նախկինում սովորում էր շուրջ 10000 երեխա) ներկայումս գործում է 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, որտեղ այսօր սովորում է շուրջ 2400 երեխա, և որոնցից գիշերում է մոտ 30%-ը:

Չնայած նշված ձեռնարկումներին, հատուկ կրթության ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են ԿԱՊԿՈՒ երեխաների՝ կրթության մատչելիությանն ու իրենց կարիքին համապատասխան որակյալ կրթություն ստանալու հնարավորությանը: Ոլորտում առկա խնդիրներն են՝

- առկա չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վաղ հայտնաբերման ու հաշվառման համակարգ,
- ամբողջական չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները,
- հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունները կենտրոնացված են առանձին մարզերում/քաղաքներում, մինչդեռ

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ կան ՀՀ ողջ տարածքում, և դա խոչընդոտում է կրթության հասանելիությանը,

- բարելավման կարիք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրման չափորոշիչները, գործիքակազմը և մեխանիզմները,
- բարելավման կարիք ունեն հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանները,
- հանրակրթական դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ինչը խոչընդոտում է ներառական կրթության արդյունավետ իրականացմանը և այլն:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

ՀՀ Ազգային ժողովը 2012 թվականի հոկտեմբեր ամսին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքների արձագանքման եռաստիճան համակարգ:

Ինչպես նաև հատուկ կրթության ոլորտում պետական միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով նախատեսվում է բոլոր հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների լիազոր մարմին ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները բխում են «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր» ՀՀ օրենքից: Դրանք են՝

- կառուցվածքային բարեփոխումները,
- ընդունելության համակարգի կատարելագործումը,
- իրականացվող ծառայությունների ապակենտրոնացումը,
- կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը,
- երեխաների կրթության և աջակցող ծառայությունների որակի բարելավումը,
- դպրոցներում շենքային պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական բազայի համալրումը:

Միաժամանակ, համաձայն «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր» ՀՀ օրենքի, մինչև 2015 թվականը Հայաստանի զարգացման համար ուղենիշային պետք է լինեն «Հազարամյակի հռչակագրի» և «Կրթություն բոլորի համար» գլոբալ շարժման սահմանած նպատակադրումները: Կրթության զարգացման ռազմավարական նպատակին հասնելու համար մինչև 2015 թվականը սահմանվել են նպատակադրումներ, որոնք վերաբերում են նաև հատուկ կրթությանը, այն է՝

- տարրական և միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը հասցնել 99%-ի,
- ընդլայնել դպրոցահասակ երեխաների (ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող), ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

#### **4. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը**

Բարեփոխման ծրագրի նախագիծն ուղղված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության և որակի ապահովմանը:

#### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից: Նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, միջազգային կազմակերպությունների ու ՀԿ-երի հետ, սահմանված կարգով դրվել է շրջանառության:

#### **6. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի նպատակն է ՀՀ-ում ձևավորել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության որակյալ համակարգ, որը նրանց համար կապահովի հավասար հնարավորություններ՝ իրենց նախասիրություններին, ընդունակություններին ու կարիքին համապատասխան որակյալ կրթություն ստանալու համար, կնպաստի կրթության մեջ նրանց ներգրավմանն ու համընդհանուր ներառմանը հասարակության մեջ: Այդ նպատակով մի շարք հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ կվերակազմակերպվեն հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը**

<<Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

### **2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը**

Որոշման նախագիծը նպատակաուղղված է ՄԱԿ-ի Հազարամյակի նպատակների իրականացմանը, <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին>> և <<Երեխայի իրավունքների մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիաների, <<Կրթություն բոլորի համար>> հռչակագրի պահանջների և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ  
ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

### **1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը**

Նախագիծը տեղադրված է ինտերնետային կայքում՝ [www.edu.am](http://www.edu.am) հասցեում:

### **2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին**

Որոշման նախագծի հետ կապված աշխատանքային քննարկում իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունում: Քննարկմանը մասնակցել են ներկայացուցիչներ՝ ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններից, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնից, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Երևան քաղաքի ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներից, միջազգային ու հասարակական կազմակերպություններից:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**<<ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ  
ՆՎԱՋԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ նախատեսվող հատուկ կրթության համակարգի բարեփոխումների արդյունքում ֆինանսական ծավալների փոփոխությունը կկատարվի բյուջետային գործընթացով նախատեսված՝ Միջնաժամկետ ծախսային ծրագրի կողմնորոշիչ չափաքանակների և տարեկան բյուջեով նախատեսվող միջոցների շրջանակներում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**<<ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ  
 ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ՇԱՀԱԳՐԳԻՌ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն                      22.05.2013                      թիվ ԱԱ/ԼՂ-2-4/3725-13</p>	<p>1. Առաջարկվել է նախագծի 7-րդ կետի 7-րդ ենթակետը հանել, հաշվի առնելով 11-րդ կետում հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների դասակարգումը:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>7-րդ կետում նշված են ԿԱՊԿՈՒ երեխաների խմբերը, որոնք համապատասխանում են &lt;&lt;Կրթության առանձնա հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին&gt;&gt; ՀՀ օրենքով սահմանված ներին, իսկ 11-րդ կետում խոսվում է հատուկ դպրոցների պայմանական դասակարգման մասին:</p>
	<p>2. Առաջարկվել է խմբագրել 26-ի 4-րդ ենթակետը, քանի որ այն չի բխում երեխաների իրավունքների պաշտպանության սոցիալական ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններից: Սոցիալապես անապահով երեխաների դուրսբերումը հատուկ հանրակրթական ուսումնական հաստատու</p>	<p>Ընդունվել է</p>	<p>26-ի 4-րդ ենթակետը խմբագրվել է:</p>

	<p>թյուններից առաջնային լուծում պահանջող խնդիր է: Երեխաների պաշտպանության սոցիալական ոլորտի քաղաքականության գերակայությունը երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանիքում կազմակերպելն է, հաստատություններից երեխաներին ընտանիք վերադարձնելու և նրանց մուտքը հաստատություններ կանխարգելելու միջոցով: Ուստի անընդունելի է նոր շուրջօրյա հաստատությունների ստեղծումը: Միաժամանակ առաջարկվել է՝ այն մարզերի հատուկ հանրակրթական հաստատություններում, որտեղ կան սոցիալապես անապահով երեխաներ և տվյալ մարզում բացակայում է հաստատությունների համար այլընտրանքային ծառայությունները՝ մի մասով դրանք վերակազմակերպել /երկարօրյա դպրոց, ցերեկային կենտրոն/ ծառայեցնելով երեխաների սոցիալական կարիքների բավարարմանը՝ հաշվի առնելով երեխայի գերակա շահը, ապահովելով երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը:</p>		
--	--	--	--

	3. Առաջարկվել է նախագծի 13-րդ կետի թվերը ճշտել:	Ընդունվել է	13-րդ կետում ճշգրտվել է հաստատությունների թիվը:
	4. Առաջարկվել է 32-րդ կետի <<չափավոր, ծանր և>> բառերը հանել, քանի որ այն չի համապատասխանում <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի Հոդված 11-ի 7-րդ կետին:	Չի ընդունվել	<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի Հոդված 19-ում (առաջին ընթերցումից հետո) այդ խմբի երեխաները թվարկված են: Բացի այդ, նշված խմբի՝ չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների արդյունավետ կրթություն այսօր հանրակրթական դպրոցում հնարավոր չէ կազմակերպել:
	5. 40-րդ կետի 2-րդ ենթակետում նշվում է, որ կկրճատվեն հատուկ դպրոցների թիվը, մինչդեռ 42-րդ կետի 1-ին ենթակետի բովանդակությունը ցույց է տալիս, որ հատուկ հանրակրթական ուսում նական հաստատությունների թիվը ոչ միայն չի կրճատվում, այլ վերակազմակերպվում են մանկավարժա հոգեբանական կենտրոնների՝ պահպանելով հանրակրթական հատուկ ծրագրի իրականացման իրավունքը:	Ընդունվել է	Ձևակերպումը վերցված է <<<< կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր>> ՀՀ օրենքից, և 2-րդ ենթակետում տրվել է <<կրճատում>> բառի պարզաբանումը: 40-րդ կետի 2-րդ ենթակետը խմբագրված է:
	6. Նախագծի 27-րդ կետում հատուկ կրթության ոլորտում բարեփո	Ընդունվել է	Լրացվել է նոր՝ 6-րդ ենթակետ, համապատասխան խմբագրմամբ:

	<p>խումների հիմնական ուղղությունների շարքում անհրաժեշտ է ավելացնել նոր՝ 6-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>&lt;&lt;6) դպրոցներում շենքային մատչելի պայմանների և համապատասխան նյութատեխնիկական բազայի ապահովում&gt;&gt;: Այս հարցը, որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում առկա խնդիր, ամրագրված է նախագծի 26-րդ կետի 8-րդ ենթակետում: Մատչելի պայմանների բացակայությունը հանդիսանում է լուրջ խոչընդոտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների /մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող/ ազատ տեղաշարժման համար, իսկ առանց համապատասխան նյութատեխնիկական բազայի, թերևս, անհնարին կլինի նրանց համար արդյունավետ կրթություն կազմակերպելը:</p>		
	<p>7. Նախագծի 34-րդ կետում անհրաժեշտ է ավելացնել նոր՝ 10-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. &lt;&lt;10)</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Գործողությունը ներառվել է Աղյուսակ 1-ում՝ Ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների</p>

	<p>կկազմակերպվեն միջոցառումներ՝ դպրոցներում ոչ խտրական վերաբերմունք և սոցիալական միջավայր ձևավորելու համար&gt;&gt;: Սա հիմնավորվում է նրանով, որ մանկավարժների և դպրոցականների խտրական կամ ոչ բարյացկամ վերաբերմունքը նույնպես լուրջ խոչընդոտ է հանդիսանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար արդյունավետ ներառական կրթություն կազմակերպելու ճանապարհին:</p>		<p>ցանկում: Առաջարկվող միջոցառումը պետք է իրականացվի ոչ միայն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, այլ նաև տարբեր ՀԿ-երի և ՁԼՄ-երի կողմից: Հանդուրժողականության մթնոլորտի և սոցիալական միջավայրի ձևավորմանը մասնակից պետք է լինեն հասարակության տարբեր խմբերը:</p>
	<p>8. Նախագծի 44-րդ կետի &lt;&lt;ԱՄԿ ՖՄԴ&gt;&gt; բառերը փոխարինել &lt;&lt;ԱՀԿ ՖՄԴ&gt;&gt; բառերով:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>44-րդ կետում արվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>&lt;&lt; Ֆինանսների նախարարություն 23.05.2013 թիվ 1/4.3-2/7006-13</p>	<p>1. Նախագծի Աղյուսակ 1-ի &lt;&lt;Ֆինանսավորման աղբյուրը&gt;&gt; սյունակում նշված է, որ միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, սակայն Նախագծում նշված նոր ձևավորվող մանկավարժահոգեբանական կենտրոնների գործառույթները իրականացնելու համար անհրաժեշտ են շենք, շինություն, առանձնաց</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Նախագծով ներկայացված բարեփոխումների ծրագիրը հայեցակարգային փաստաթուղթ է: Համաձայն &lt;&lt;Հանրակրթության մասին&gt;&gt; ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին&gt;&gt; ՀՀ օրենքի նախագծի, որը ՀՀ ԱԺ-ում անցել է առաջին ընթերցմամբ, բարեփոխումների վերջնաժամկետ է սահմանվել 2022 թվականը: Եվ &lt;&lt;Հանրակրթության</p>

	<p>ված գույք, սոցիալական և հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ, բժշկական անձնակազմ, հաշմանդամ երեխաների համար ֆիզիկական մատչելիության պայմաններով ապահովելու համար թեքահարթակներ կամ վերելակ և այլն, ինչը ենթադրում է ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացում (ֆինանսական գնահատականը բացակայում է), որի համար ինչպես ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով, այնպես էլ ՀՀ 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով միջոցներ նախատեսված չեն:</p>		<p>մասին&gt;&gt; ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին&gt;&gt; ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ տրվել է համապատասխան ֆինանսական գնահատական: Ներկա պահին Աղյուսակ 1-ով ներկայացված Ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումները ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չեն պահանջում: Օրենքի նախագծի ընդունումից հետո ֆինանսական ծավալների փոփոխությունը կկատարվի բյուջետային գործընթացով նախատեսված՝ Միջնաժամկետ ծախսային ծրագրի կողմնորոշիչ չափաքանակների և տարեկան բյուջեով նախատեսվող միջոցների շրջանակներում (կրթության ոլորտի ՄԺԾԾ հայտերով ներկայացված պլանավորումներին համապատասխան):</p>
	<p>2. Առաջարկվել է նախագծի հավելված 1-ի ՀՀ Առկա իրավիճակը&gt;&gt; բաժնի 13-րդ կետի ՀՀ 11&gt;&gt; թիվը փոխարինել ՀՀ 10&gt;&gt; թվով, 17-րդ կետի ՀՀ 98&gt;&gt;-ը՝ ՀՀ 94&gt;&gt;-ով:</p>	<p>Ընդունվել է մասամբ</p>	<p>Հատուկ դպրոցների թիվը ճշգրտվել է, իսկ ներառական դպրոցների թիվը ամրագրված է ՀՀ ԿԳ նախարարի հրամանով, ինչը համապատասխանում է ՀՀ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին&gt;&gt; ՀՀ օրենքի պահանջին:</p>

	<p>3. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել &lt;&lt;Իրավական ակտերի մասին&gt;&gt; ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթին, համաձայն որի՝ ստորագրությունը դրվում է իրավական ակտի պաշտոնական տեքստի վերջին էջի տեքստից հետո՝ նշելով պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը և իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և ընդունման վայրը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում արվել է համապատասխան խմբագրական փոփոխությունը:</p>
	<p>4. Նախագծով հաստատվող հավելվածի 8-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել &lt;&lt;Իրավական ակտերի մասին&gt;&gt; ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ իրավական այլ ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը և տեսակը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>8-րդ կետում արվել է համապատասխան փոփոխություն</p>
<p>ՀՀ առողջապահության նախարարություն 23.05.2013</p>	<p>1. Հավելվածի 33-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված &lt;&lt;վերականգնողական&gt;&gt; գործու</p>	<p>Ընդունվել է</p>	<p>33-րդ կետի 6-րդ ենթակետում նշված գործունեությունները կիրականացվեն</p>

թիվ ԴԴ/12.1/5810-13	<p>ներությունը ներառված է ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկում և այն իրականացնելու համար կենտրոնը պետք է ունենա ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N867 որոշմամբ սահմանված կարգով տրված լիցենզիա՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի:</p>		<p>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների ընդունումից հետո, երբ նշված հաստատությունները կվերակազմակերպվեն, իսկ դրանց գործունեությունը կհամապատասխանեցվի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին:</p>
	<p>2. Հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետում ներառված հիվանդությունները համեմատել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի մարտի 31-ի N 67-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների դասակարգչի և Հիվանդությունների միջազգային դասակարգչի (10-րդ վերանայման) հետ:</p>	Չի ընդունվել	<p>33-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դասակարգումը համապատասխանեցված է ոչ թե ԱՀԿ ՀՄԴ-ի (Հիվանդությունների միջազգային դասակարգման), այլ ԱՀԿ ՖՄԴ-ի (Ֆունկցիաների միջազգային դասակարգման) հետ: Այլ կերպ ասած՝ դասակարգման հիմքում ընկած է ոչ թե հիվանդությունը, այլ ֆունկցիան: (Տես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջարկությունների 8-րդ կետը):</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Նախագծի 20-րդ կետի համաձայն նախատեսվում է բոլոր</p>	Չի ընդունվել	<p>Գործողությունը պայմանավորված է Հայաստանի</p>

<p>03.06.2013 թիվ 03/15/2895-13</p>	<p>հատուկ հանրա կրթական ուսումնական հաստատությունների լիազոր մարմին ճանաչել ՀՀ ԿԳՆ: Սակայն մարզային ենթակայու թյամբ գործող հատուկ ուսումնական հաստա տությունների առկայու թյունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ նշված ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացմանը, այնպես ինչպես մարզային ենթակայու թյամբ գործող հանրակրթական ուսում նական հաստատություն ների առկայությունը չի խոչընդոտում հանրա կրթության ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացմանը կամ համայնքային ենթա կայությամբ գործող նախադպրոցական կրթության հաստատու թյունների առկայու թյունը՝ նախադպրո ցական կրթության ոլորտում պետական միասնական քաղաքա կանությանը: Առաջարկվում է նախագծից հանել 20-րդ կետը:</p>		<p>Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված՝ &lt;&lt;Հայաստան- Պարենային ապահովության ծրագիր 2010&gt;&gt; ծրագրի Ֆինանսավորման համաձայնագրի N2 հավելածի 1.2 կետի պահանջով, որում նշվում է միասնական արդյունավետ կառավար մանն անցնելու անհրաժեշտությունը:</p>
	<p>2. Այլուսակ 1-ի 3-րդ կետով նախատեսվում է մշակել ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի N1 հատուկ և Սիսիանի մտավոր թերզար</p>	<p>Ընդունվել է մասամբ</p>	<p>Այլուսակ 1-ի 3-րդ և 4-րդ կետերը միավորվել են, իսկ Սիսիանի և Գորիսի հատուկ դպրոցների փոխակերպման գործո ղությունների պլանը</p>

	<p>գացում ունեցող երեխա ների N1 հատուկ (օժանդակ) դպրոցների վերակազմակերպման փորձնական ծրագիրը, իսկ 4-րդ կետով նախատեսվում է հաստատել փորձնական ծրագրի իրականացման ժամանակացույցը:</p> <p>Սակայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել է վերը նշված երկու հատուկ դպրոցների վերակազմակերպման ծրագիրը: Առաջարկվում է ամփոփել արդեն իսկ մշակված ծրագիրը, սահմանել դրանով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները և այն ներկայացնել որպես ծրագրի նախագծի առանձին հավելված, իսկ միջոցառումների պլանի 3-րդ և 4-րդ կետերը հանել:</p>		<p>Նախատեսված է ՀՀ վարչապետի՝ 10.01.2013 թիվ 02/14.1/14760-13 հանձնարարականով:</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 03.07.2013 թիվ 01/3856-13</p>	<p>1. Նախագծի հավելվածով հաստատված ծրագրի /այսուհետ՝ ծրագիր/ 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել և ճիշտ նշել ՀՀ օրենքի անվանումը, մասնավորապես՝ &lt;&lt;ծրագիր&gt;&gt; բառն անհրաժեշտ է փոխարինել &lt;&lt;ծրագիրը հաստատելու մասին&gt;&gt; բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև ծրագրի</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 1-ին և 25-րդ կետերում արվել է համապատասխան խմբագրական փոփոխությունը:</p>

	25-րդ կետին:		
	2. Ծրագրի 7-րդ կետում <<հակասոցիալակ>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<հակասոցիալական>> բառով:	Ընդունվել է	7-րդ կետում արվել է համապատասխան խմբագրական փոփոխությունը
	3. Ծրագրի 34-րդ կետի 8-րդ ենթակետում և 35-րդ կետի 7-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ <<ռեսուրս-կենտրոնի>> մասին է խոսքը:	Ընդունվել է	<<Հատուկ դպրոց ռեսուրս-կենտրոնի>> գաղափարը ամրագրված է <<<< կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-246-Ն) հաստատված հավելվածի՝ 7.1 կետի 12-րդ ենթակետում: Միաժամանակ Աղյուսակ 1-ի 4-րդ կետով նախատեսված՝ <<Հանրապետական N1 հատուկ կրթահամալիրի գործունեության ընդլայնման (որպես հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի) ծրագրի մշակում և իրականացում>> գործողությունը նպատակ ունի հստակեցնելու հատուկ դպրոց ռեսուրս-կենտրոնի գործունեության շրջանակները:
	4. Ծրագրի 35-րդ կետի 4-րդ ենթակետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ <<իրավական, նորմատիվ փաստաթղթերի բազան>> բառերն անհրաժեշտ է փոխարինել <<նորմատիվ	Ընդունվել է	35-րդ կետի 4-րդ ենթակետում արվել է համապատասխան խմբագրական փոփոխությունը:

	իրավական ակտերը>> բառերով:		
	5. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել նաև ՀՀ տարածքային կառա վարման նախարա րության հետ:	Ընդունվել է	Նախագծի վերաբերյալ առկա է նաև ՀՀ տարածքային կառավար ման նախարարության առաջարկությունները: